ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վարդենիս **27/04/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 21 անդամներ:

Բացակա էին՝ Արմինե Աղաջանյանը, Մելանյա Եփրեմյանը, Ռաֆայել Խչեյանը, Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը, Կարեն Սիմոնյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ահարոն Խաչատրյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Զարոյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի դրույթներով՝ հիմք ընդունելով <<Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության>> բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Վարդենիս համայնքի բյուջեի սոցիալական ծախսերից 4729 հոդվածից տրամադրել դրամական աջակցություն Վարդենիս համայնքի անապահով բնակիչներ՝

1.Արմենուհի Մարտիրոսյան /Սոթք/20 000/քսան հազար/ ՀՀ դրամ

2.Թամարա Գասպարյան /Սոթք/30 000/ երեսուն հազար/ ՀՀ դրամ

3.Հեղինե Ղանդիլյան /Ծովակ/30 000/ երեսուն հազար/ ՀՀ դրամ

4.Բոցարես Մանուկյան /Ծովակ/60 000/ վաթսուն հազար/ ՀՀ դրամ

5.Արսեն Հովաննիսյան /Ծովակ/60 000/ վաթսուն հազար/ ՀՀդրամ

6.Հայկարամ Գրիգորյան /Կարճաղբյուր/30 000/ երեսուն հազար/ ՀՀ դրամ

7.Վոլոդիա Գրիգորյան /Կարճաղբյուր/20 000/ քսան հազար/ ՀՀ դրամ

8.Ստյոպիկ Սահակյան /Վարդենիս/20 000/ քսան հազար/ ՀՀ դրամ

9.Էվելիկ Խաչատրյան /Վարդենիս/20 000/քսան հազար/ ՀՀ դրամ

10.Աշոտ Հովհաննիսյան /Փոքր Մասրիկ/60 000/վաթսուն հազար ՀՀդրամ

11.Սայադ Պետրոսյան /Գեղամասար/60 000/վաթսուն հազար/ ՀՀ դրամ

12.Ավետիք Աղաբեկյան /Ակունք/40 000/ քառասուն հազար/ ՀՀ դրամ

13.Ռոզա Քոչարյան /Գեղամասար/40 000/ քառասուն հազար/ ՀՀ դրամ

14. Սանասար Ավետիսյան /Մաքենիս/60 000/ վաթսուն հազար/ ՀՀ դրամ

15. Սալբինազ Ստեփանյան /Վարդենիս/ 100 000/ հարյուր հազար/ ՀՀ դրամ

16. Անետա Գրիգորյան /Ծովակ/ 30 000/ երեսուն հազար/ ՀՀ դրամ

17. Ֆելիքս Պապեյան /Վարդենիս/ 30 000/ երեսուն հազար/ ՀՀ դրամ

18. Լենա Գևորգյան /Մաքենիս/ 30 000/ երեսուն հազար/ ՀՀ դրամ

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի վերջին հարցը: Հարցի շուրջ առաջարկություններ և առարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: 19 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ա/

Լսեցին

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ՝ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2030 ՕՐԱԿԱՐԳԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ դրույթներ և 13-րդ հոդվածի 10-րդ կետը Վարդենիս համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Վարդենիս համայնքի մասնակցությանը <<Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում>> ծրագրերի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթն.

2. Համաձայնություն տալդրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Վարդենիս համայնքի 2023թ. բյուջեից կատարել համապատասխան համաներդրում:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի 18-րդ հարցը: Հարցի շուրջ ելույթ ունեցավ <<Ահարոն Խաչատրյան>> խմբակցության անդամ Կարեն Մկրտչյանը, ով տվեց պարզաբանում հարցի վերաբերյալ: Հարցի շուրջ առաջարկություններ և առարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: 19 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 5-ի <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 37-Ա որոշման մեջ <<ՄՄԾ Վարդենիսի տարածքային բաժնի տնօրենի ժ/պ Նոնա Աղաջանյան>> բառերը փոխարինել << ՄՄԾ Վարդենիսի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատանք և զբաղվածության ծրագրերի բաժնի պետ՝ Լուսինե Հովսեփյան>> բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի հաջորդ հարցը: Հարցի շուրջ առաջարկություններ և առարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: 19 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

Լսեցին

ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդածի 1-ին կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի N526-Ն որոշման դրույթները և համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին՝

1. Կատարել մեկ անձից գնում Վարդենիս համայնքի ասֆալտապատ փողոցների փոսային նորոգման և ճաքալցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և պարզ փորձաքննության աշխատանքների համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի հաջորդ հարցը: Հարցի շուրջ առաջարկություններ և առարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: 17 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՄՀԵՐ ՇԱԲՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՈՒԱԶ ՄԱԿՆԻՇԻ 35LS981 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է.

Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի բնակիչ ՄՀԵՐ ՇԱԲՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՈՒԱԶ ՄԱԿՆԻՇԻ 35LS981 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ավտոմեքենայի գույքահարկի 152 700 /մեկ հարյուր հիսուներկու հազար յոթ հարյուր / ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 45 231 / քառասունհինգ հազար երկու հարյուր երեսուն մեկ/ ՀՀ դրամ տույժի գումարը և 30% մայր գումարից ՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո :

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի հաջորդ հարցը: Հարցի շուրջ ելույթ ունեցավ <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության անդամ Մուշեղ Շաբոյանը, ով առաջարկեց հաշվի առնել այն փաստը, որ Մհեր Շաբոյանը պատերազմի մասնակից է եղել, ինչպես նաև նշված մեքենան չի շահագործվում: Համայնքի ղեկավար՝ Ահարոն Խաչատրյանը հաշվի առնելով նշված հանգամանքները, առաջարկեց բացի տույժը զիջել նաև մայր գումարից 30%-ի չափով: Հարցի շուրջ առաջարկություններ և առարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: 19 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ NISSAN PATFHINDR ՄԱԿՆԻՇԻ 35DP868 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է.

Վարդենիս համայնքի ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ NISSAN PATFHINDR ՄԱԿՆԻՇԻ 35DP868

պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 316 051/ երեքհարյուր տասնվեց հազար հիսուն մեկ/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով գիջել 67202 /վաթսունյոթ հազար երկու հարյուր երկու/ ՀՀ տույժի գումարը և ապառքից որոշ մասը:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի հաջորդ հարցը: Հարցի շուրջ առաջարկություններ և առարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: 19 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-Ի ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է.

Վարդենիս համայնքի ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-Ի գույքահարկի 671 287 /Վեց հարյուր յոթանասունմեկ հազար երկու հարյուր ութսունյոթ/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով գիջել 517 832 /հինգ հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ տույժի գումարը և հիմնական գումարից 30%, մնացած պարտավորությունները մարելուց հետո :

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի 13-րդ հարցը: Հարցի շուրջ հանդես եկավ <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության անդամ Մուշեղ Շաբոյանը, ով առաջարկեց բացի տույժից գիջել նաև մայր գումարը ամբողջությամբ: Հարցի վերաբերյալ հանդես եկավ նաև <<Քաղաքացիական պայմանագիր >> խմբակցության ղեկավար Նաիրա Մանուչարյանը՝ պաշտպանելով Մուշեղ Շաբոյանի առաջարկությունը: <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության անդամների և հակադրեց <<Ահարոն Խաչատրյան>> խմբակցության անդամ Կարեն Մկրտչյանը, ով նշեց, որ սահմանված կարգով պետք է առաջնորդվել և գիջել ներկայացված ձևով: Նիստ վարողը առաջարկեց բացի տույժից գիջել նաև մայր գումարից 20% չափով: Հարցի շուրջ այլ առաջարկություններ և առարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: 19 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 05-051-0110-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.02ՀԱ, „ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ„ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ „ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ„ ԿԱՊԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության կառավարության>> 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով, <<Տելեկոմ Արմենիա>> ՓԲ ընկերության տեխնիկական տնօրեն Գևորգ Գևորգյանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի վարչական սահմաններում ընգրկված <<Տելեկոմ Արմենիա>> ՓԲ ընկերությանը վարձակալության իրավունքով պատկանող (Վարձակալության իրավունքի վկայականներ N0083295 տրված 12/08/2003թ) 0.02հա <<գյուղատնտեսական նշանակության>> այլ հողատեսքի նշանակությունը <<Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվաքների
օբյեկտների>> կապի նշանակության փոխադրելու՝ գոյություն ունեցող պեհավաք:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի 12-րդ հարցը: Հարցի շուրջ առաջարկություններ և առարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: 19 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 9 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0,015ՀԱ ՍԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Սիմոնյան կրթական հիմնադրամի գլխավոր տնօրեն Մարի Լու Փափազյանի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Վարդենիսի համայնքի Ծովակ բնակավայրի 1-ին փողոց 4-րդ նրբանցք 9 հասցեի հողամասից 0,015հա հողամաստ 10(տասը) տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամասրել Սիմոնյան կրթական հիմնադրամին՝ նոր Թումո կենտրոն կառուցելու համար:

2.Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնին՝ սահմանված կարգով կազմել համապատասխան փաստաթղթերը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի հաջորդ հարցը: Հարցի շուրջ առաջարկություններ և առարկություններ չեղան և հարցը դրվեց քվեարկության: 19 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշման 3-րդ գլխի 9-րդ կետի դրույթներով Վարդենիս համայնքի ավագանին որոշում է՝

1.Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը վարձակալությամբ տրամադրելու համաձայնություն ստանալու համար դիմել Գեղարքունիքի մարզպետին.

1.1 Տրետուք բնակավայր՝ ծածկագիր 05-090-0110-0003, սեփականության իրավունքի վկայական՝ N 20022023-05-0077, արոտավայր, խոտհարք՝ 20,5997հա :

1.2 Տրետուք բնակավայր՝ ծածկագիր 05-090-0110-0002, սեփականության իրավունքի վկայական՝ N 20022023-05-0092, այլ հողատեսք՝ 3,973հա:

1.3 Ակունք բնակավայր՝ ծածկագիր 05-008-0388-0014, սեփականության իրավունքի վկայական՝ N 28032023-05-0060, այլ հողատեսք՝ 1.18477հա:

1.4 Ակունք բնակավայր՝ ծածկագիր 05-008-0388-0015, սեփականության իրավունքի վկայական՝ N 28032023-05-0068, այլ հողատեսք՝ 7.3745հա:

1.5 Ակունք բնակավայր՝ ծածկագիր 05-008-0388-0004, սեփականության իրավունքի վկայական՝ N 28032023-05-0042, այլ հողատեսք՝ 1.47717հա:

1.6 Ակունք բնակավայր՝ ծածկագիր 05-008-0388-0024, սեփականության իրավունքի վկայական՝ N 28032023-05-0055, այլ հողատեսք՝ 1.99805հա:

1.7 Ակունք բնակավայր՝ ծածկագիր 05-008-0388-0019, սեփականության իրավունքի վկայական՝ N 28032023-05-0088, այլ հողատեսք՝ 2.00729հա:

1.8 Նորակերտ բնակավայր՝ ծածկագիր 05-069-0132-0002, սեփականության իրավունքի վկայական՝ N 08092015-05-0043, վարելահող՝ 1,0174հա:

1.9 Նորակերտ բնակավայր՝ ծածկագիր 05-069-0121-0119, սեփականության իրավունքի վկայական՝ N 08092015-05-0042, վարելահող՝ 0,78057հա:

1.10 Նորակերտ բնակավայր՝ ծածկագիր 05-069-0121-0117, սեփականության իրավունքի վկայական՝ N 08092015-05-0044, վարելահող՝ 0,77592հա:

1.11 Նորակերտ բնակավայր՝ ծածկագիր 05-069-0121-0116, սեփականության իրավունքի վկայական՝ N 08092015-05-0039, վարելահող՝ 0,49111հա:

1.12 Նորակերտ բնակավայր՝ ծածկագիր 05-069-0120-0007, սեփականության իրավունքի վկայական՝ N 08092015-05-0046, վարելահող՝ 0,24802հա:

1.13 Նորակերտ բնակավայր՝ ծածկագիր 05-069-0120-0005, սեփականության իրավունքի վկայական՝ N 08092015-05-0048, վարելահող՝ 0,54866հա:

1.14 Նորակերտ բնակավայր՝ ծածկագիր 05-069-0101-0066, սեփականության իրավունքի վկայական՝ N 08092015-05-0038, վարելահող՝ 2,08935հա:

1.15 Նորակերտ բնակավայր՝ ծածկագիր 05-069-0201-0268, սեփականության իրավունքի վկայական՝ N 23102019-05-0064, վարելահող՝ 1,89հա:

2.Սույն որոշումը ուժի մեջ է ստորագրման պահից:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի 10-րդ հարցը: Նիստ վարողը ներկայացրեց, քանի որ նախագծում ընդգրկված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը պետական սեփականություն են հանդիսանում՝ վարձակալությամբ տրամադրելու համար անհրաժեշտ է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի համաձայնությունը, ուստի անհրաժեշտ է ավագանու անդամների համաձայնությունը նախագիծը ներկայացնելու համար: Հարցի շուրջ առարկություններ և առաջարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: Արդյունքում 19 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76, 77 և 94-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է՝ թույլատրել համայնքի ղեկավարին.

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Գեղաքար բնակավայրի սեփականություն հանդիսացող 05-026-0106-0009 ծածկագրով 7,12324հա 5-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

2.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Գեղաքար բնակավայրի սեփականություն հանդիսացող 05-026-0106-0004 ծածկագրով 3,64014հա 3-րդ կարգի արոտավայրը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

3.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Նորաբակ բնակավայրի սեփականություն հանդիսացող 05-068-0110-0037 ծածկագրով 3,09814հա 4-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

4.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Դարանակ բնակավայրի սեփականություն հանդիսացող 05-029-0013-0018 ծածկագրով 0.1012հա 2-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

5.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Դարանակ բնակավայրի սեփականություն հանդիսացող 05-029-0013-0017 ծածկագրով 0.83608հա 2-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

6.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Փամբակ բնակավայրի սեփականություն հանդիսացող 05-091-0226-0007 ծածկագրով 0.60037հա 3-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

7.Հաստատել վարձակալության տրամադրվող 5-րդ կարգի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար 1700 (մեկ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

8.Հաստատել վարձակալության տրամադրվող 4-րդ կարգի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար 3900 (երեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

9.Հաստատել վարձակալության տրամադրվող 3-րդ կարգի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար 6030 (վեց հազար երեսուն) ՀՀ դրամ:

10.Հաստատել վարձակալության տրամադրվող 2-րդ կարգի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար 7400 (յոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

11.Հաստատել վարձակալության տրամադրվող 3-րդ կարգի արոտավայրի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար 4500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

12.Ապահովել մրցույթի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթերը՝ մրցույթ անցկացնելու համար:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի 9-րդ հարցը: Հարցի շուրջ առաջարկություններ և առարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: 19 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ Վարդենիս համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

1.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի 6-րդ փողոց 1/3 հասցեի (ծածկագիր 05-051-0019-0104, սեփականության իրավունքի վկայական 29032023-05-

0032) 0.16248հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատեսքի հողը օտարել աճուրդ վաճառքի միջոցով:

2.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի 6-րդ փողոց 1/4 հասցեի (ծածկագիր 05-051-0019-0105, սեփականության իրավունքի վկայական 29032023-05-0031) 0.10318հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատեսքի հողը օտարել աճուրդ վաճառքի միջոցով:
3. Մեկնարկային գինը սահմանել՝1քմ-ի համար 550 (հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ (16-րդ գոտի):

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի հաջորդ հարցը: Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղավ: Քվեարկությանը մասնակցում էին ավագանու 19 անդամ, քանի որ <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության անդամ Սևակ Սիմոնյանը ընդմիջումից հետո չվերադարձավ նիստերի դահլիճ: Հարցը քվեարկության դրվեց , արդյունքում 19 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետի և «Մենեջմենթ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից կազմված գնահատման ակտը հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ Լուսակունքի 6 հասցեի 1998 թվականին կառուցված վարչական շենքը- 316.1քմ, պահեստ-354.1քմ, 210քմ, 28.3քմ, 87.4քմ, 66.6քմ, 106.7քմ, ջրավազան 136.2քմ, պարիսպ- 160.3քմ, 3.7քմ և 4.00893հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքով:
2. Աճուրդ-վաճառքի մեկնարկային գինը սահմանել (ըստ գնահատման ակտի) 21 100 000/ քսանմեկ միլոն մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3. Քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնին կազմել համապատասխան փաստաթղթերը և ներկայացնել աճուրդային հանձնաժողովին:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի 7-րդ հարցը: Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղավ, հարցը դրվեց քվեարկության, արդյունքում 14 կողմ, 0 դեմ, 6 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը ընդունվեց: Հայտարարվեց ընդմիջում:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ, ՄԵԽԱՆԻԶԱՑԻԱՆԵՐԸ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել Վարդենիս համայնքի ղեկավարին՝

1.Համայնքային սեփականություն հանդիսացող GAZ 3613 (GAZ-53-12) բենզատար տեխնիկան՝ համայնքի աղբահանության և բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով անհատույց և անժամկետ օգտագործման տրամադրել "Վարդենիսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում" ՀՈԱԿ-ին և կնքել համապատասխան պայմանագիր:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի 6-րդ հարցը: Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղավ, հարցը դրվեց քվեարկության: Արդյունքում 20 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը ընդունվեց:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17 ՄԱՐՏԻ 2023Թ.-Ի "ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ

հոդվածի 28-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի ավագանու 2023թ. մարտի 17-ի <<<< ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 39-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ <<<< Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Միհեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատ>> ՀՈԱԿ-ում 9-րդ կետում կատարել փոփոխություն՝ հրահանգիչ 0,75 միավոր հաստիքը փոխել 1 միավորի:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի 5-րդ հարցը: Հարցի շուրջ առաջարկություններ և առարկություններ չեղան: Հարցը դրվեց քվեարկության, արդյունքում 20 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքով հարցը ընդունվեց:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 Թ-Ի ՀՈՒՆՎԱՐԻ 24_Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ և 2-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1.<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 4-Ա ՈՐՈՇՄԱՆ <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ>> բաժնի 5-րդ տողում և 19 տողում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.Հաստատել միկրոավտոբուսների վարորդների համար, ուղերթ կատարելիս, յուրաքանչյուր վարած կիլոմետրի համար վճարել 15 դրամ՝ ավելացնելով հաստատված դրույքաչափին:

1.2 Նկարիչ/օպերատոր 0,5 միավոր հաստիքը փոխել 1 միավոր նկարիչ/օպերատոր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի 4-րդ հարցը: Հարցի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան: Հարցը դրվեց քվեարկության, արդյունքում 20 կողմ, 0 ձեռնպահ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հարցը ընդունվեց:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

Վարդենիս համայնքի 2023թ.համար հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝ 1.Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՄՆ-ի 2023թ-ի մարտի 14-ի N//5682-2023 գրությունը ,ըստ որի, խնդրվում է Վարդենիս համայնքի աջակցությունը նախադպրոցական կրթության միկրոծրագրերի կառավարման հանձնաժողովի 2023թ հունվարի 12-ի նիստում հաստատված ուսումնական հաստատություններում ծրագրով նախատեսված համապատասխան ներդրման ապահովումը ՝համաձայն Վարդենիս համայնքի համար հաստատված հաստատությունների ցանկի՝<<Կարճաղբյուրի Ա.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ 2 761 000 ՀՀ դրամ, <<Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ 837 000 ՀՀ դրամ.ընդամենը 3 598 000 ՀՀ դրամ; թույլատրել համայնքի ղեկավարին Վարդենիս համայնքի 2023թ.համար հաստատված բյուջեի պահուստային ֆոնդից 4637 /Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին/ տնտեսագիտական հոդվածով կատարել վերոնշյալ 3 598 000 ՀՀ դրամի ներդրումը

Ելույթով հանդես եկավ համայքնի ղեկավար Ահարոն Խաչատրյանը, ներկայացնելով օրակարգի երրորդ հարցը: Հարցի վերաբերյալ ելույթով հանդես եկավ <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ղեկավար Դավիթ Շահնազարյանը, ով խնդրեց պարզաբանել, արդյոք այս ֆինանսավորման արդյունքում ունենք հստակ գնահատական, թե քանի երեխա կօգտվի նախադպրոցական կրթության իրավունքից, ինչպես նաև այս ֆինանսավորումը արդյոք նախատեսված է մեկ տարվա կտրվածքով, թե ավել: Նիստ վարողը՝ Ահարոն Խաչատրյանը պարզաբանեց <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ղեկավար Դավիթ Շահնազարյանի հարցը, նշելով որ ծրագիրը միանվագ

սուբսիդավորում է և նախատեսված է միայն 2023թվականի համար, իսկ երեխաների թիվը հստակեցվում է դպրոցների տնօրենների հետ: Հարցի շուրջ այլ առաջարկություններև և առարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: Արդյունքում 20 կողմ, 0 ձեռնպահ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հարցը ընդունվեց:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

Վարդենիս համայնքի 2023թ.համար հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝
1.Ելնելով անհրաժեշտությունից ՝ թույլատրել համայնքի ղեկավարին վարչական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝ 01,06,01,51 գործառնական դասակարգման 4239 տնտեսագիտական հոդվածից պակասեցնել 2600,0 հազ դրամ այն ավելացնելով 01,01,01,51 գործառնական դասակարգման 4214 /կապի ծառայություններ/ տնտեսագիատական հոդվածին 800,0 հազ.դրամ , 4232 /համակարգչային ծառայություններ/տնտեսագիատական հոդվածին 1700,0 հազ.դրամ իսկ մնացած 100,0 հազ դրամն էլ ավելացնել 08,02,01,51 /գրադարաններ/ գործառնական դասակարգման 4214 տնտեսագիատական հոդվածին:

2.Նկատի ունենալով այն հանգամանքը ,որ ՀՀ կառավարությունը 2022թ օգոստոսի 11-ի նո 1313-Լորոշմամբ նախատեսել է Վարդենիս համայնքի հողօգտագործողներին աշնանացան ցորենի արտադրության խթանման համար որպես պետական աջակցություն տրամադրելու է 135,400 հազ/դրամ դրամ, թույլատրել համայնքի ղեկավարին 2023թ-ի բյուջեի եկամտային մասը, այլ ոչ հարկային եկամտատեսակում, ավելացնել նշված գումարը, իսկ ծախսային մասում այն ավելացնել 04,02,01 գործառնական դասակարգման/գյուղատնտեսություն/ 4729 տնտեսագիտական հոդվածին:

Ելույթով հանդես եկավ համայքնի ղեկավար Ահարոն Խաչատրյանը, ներկայացնելով օրակարգի երկրորդ հարցը: Հարցի շուրջ առաջարկություններ և առարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: Արդյունքում 16 կողմ, 0 դեմ, 4 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի զեկուցումը 2023 թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարողականը՝ համաձայն հավելվածի:

Ելույթով հանդես եկավ համայքնի ղեկավար Ահարոն Խաչատրյանը, ներկայացնելով օրակարգի առաջին հարցը: Հարցը առավել մանրամասն ներկայացնելու համար ելույթով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը: Հարցի շուրջ առաջարկություններ և առարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: Քվեարկությանը մասնակցում էին ավագանու նախնական 21 անդամներից 20-ը, քանի որ <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության անդամ Հայկ Երանոսյանը օրակարգի քվեարկությունից հետո դուրս էր եկել նիստերի դահլիճից: Արդյունքում 14 կողմ, 0 դեմ, 6 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ն/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 27-ի հերթական նիստի օրակարգը բաղկացած 18 հարցից՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 Թ-Ի ՀՈՒՆՎԱՐԻ 24_Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17 ՄԱՐՏԻ 2023Թ.-Ի "ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 15-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ, ՄԵԽԱՆԻԶԱՑԻԱՆԵՐԸ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
8.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
10.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ
11.ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 9 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0,015ՀԱ ՍԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
12.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 05-051-0110-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.04ՀԱ, ,,ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ,, ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ,,ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ,, ԿԱՊԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
13. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ

ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-Ի ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ
14. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ NISSAN PATFHINDR ՄԱԿՆԻԾԻ 35DP868 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻԾԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ
15. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՄՀԵՐ ՇԱԲՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՈՒԱԶ ՄԱԿՆԻԾԻ 35LS981 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻԾԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ
16. ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
17. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
18.ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ՝ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2030 ՕՐԱԿԱՐԳԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2023թվականի ապրիլի 27-ին ժամը 14:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու հերթական 5-րդ նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 21-ը: Նիստը իրավազոր է: Նիստը վարում է համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը: Նիստին մասնակցում էին համայնքի ղեկավարի օգնական Ալիկ Եղիազարյանը, համայնքի ղեկավարի տեղակալ Արամ Հարությունյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Խաժակն Մկրտչյանը, համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Էդգար Պետրոսյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը, քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնի պետ Աբգար Աբգարյանը, ինչպես նաև ՄՄԾ Վարդենիսի տարածքային կենտրոնի տնօրեն Ռ. Գինոսյանը և ՄՄԾ Վարդենիսի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատանք և զբաղվածության ծրագրերի բաժնի պետ՝ Լուսինե Հովսեփյան:Համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը հայտարարեց նիստը բացված: Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավարը՝ ներկայացրեց օրակարգում ընդգրկված հարցերը: Օրակարգը բաղկացած է 18 հարցից: Օրակարգի վերաբերյալ հանդես եկավ <<Ահարոն Խաչատրյան>> խմբակցության անդամ Կարեն Մկրտչյանը, ով առաջարկեց օրակարգում ընդգրկել <<ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ՝ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2030 ՕՐԱԿԱՐԳԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> հարցը, ծրագրի հրատապությունից ելնելով: Օրակարգի հետ կապված այլ առաջարկություններ և առարկություններ չեղավ: Օրակարգը հաստատելու համար հարցը դրվեց քվեարկության, արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ օրակարգը հաստատվեց 19 հարցով:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱՉՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ՋԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Կամո Զարոյանը